Հայերը հալածեց, և Զուհրեայ վանքը աւերեց։ Բայց ինքն այլ բռնուեցաւ և սպանուեցաւ։ Խալիֆային աղաչեց Վահրամայ՝ որ դառնայ իր վէզիրութեան աթոռը. սա յանձն չառաւ, այլ իբրեւ հիւր ատեն մի կեցաւ յարքունիս, և յետոյ ի վանորայս, մինչեւ ի մահն։ Աբուսահլ չի պատմեր այս բաները. միայն ի ստորագրութեան հռչակաւոր Ճերմակ վանաց, بير القديس, կամ Ղփտեաց մեծ Ս. Շնուտի կամ Շանուտի, որ և Սանութիոս, կ'ըսէ.

« Վահրամ քրիստոնեայ Հայն՝ որ Ալ-
» Հաֆըզ Խալիֆայի ատեն վզուրկ եղած
» էր, և յետոյ կրօնաւոր, այս վանացս
» մէջ միանձնացաւ, իր պաշտօնէն մեր-
» ժուելէն ետեւ. վերջը թէպէտ և խիստ
» շատ տկար և հիւանդ էր, բայց փափա-
» գեցաւ երթալ ի Գահիրէ. ուր և տար-
» ուեցաւ, և զեռ ողջ հասաւ »։

Ուրիշ նշանաւոր վանքի մի, Ալ Քուսայիր կոչուած (القصير) ստորագրութեան մէջ՝ յիշէ Աբուսահլ զեղբայրն Վահրամայ. որ երբ այդ դարէ ի վեր (1010ին) աւերուած և կոզոպտուած վանքին համար հրաման տրուեցաւ կրօնաւորաց՝ նորոգելու,

« Ալ-Եասալ (Վասակ) եղբայր Թաճատ-տուլա Վահրամայ՝ սահմանեց այդ